ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[3]-22.11.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 26.1 կետով հետևյալ խմբագրությամբ.~~

~~«26.1.~~	~~իրավաբանական անձանց կամ **անհատ ձեռնարկատերերի** կողմից հրագործական **արտադրատեսակների** առևտրի (իրացման), կիրառման (շահագործման) (**բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների),** արտադրության, **ներմուծմամբ զբաղվելու գործունեության**, պահեստավորման թույլտվություն տալու համար»:~~	~~բազային տուրքի 50 պատիկի չափով~~

«**Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի «(այսուհետ՝ Օրենք)» 19-րդ հոդվածի 1-ին մասի «18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժինը լրացնել 18.18-րդ կետով կետով հետևյալ բովանդակությամբ.**

«18.18.	**Տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների, կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների 3-րդ դասի արտադրության, ներմուծման, կիրառման (շահագործման), առևտրի (իրացման), պահեստավորման և տեղափոխման համար** **կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների պահեստավորման և տեղափոխման համար**	**բազային տուրքի 500-ապատիկի չափով»:**

~~**Հոդված 2.** 20.1 հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1)-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~1) «**Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների** առևտրի (իրացման) իրավունք ձեռք բերելու համար՝»:~~

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«26.	իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման, պահեստավորման, տեղափոխման կամ կիրառման (շահագործման) թույլտվություն տալու համար	բազային տուրքի 500-ապատիկի չափով

~~Հոդված 2. Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1)-ին կետը ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 3. Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

~~Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:~~

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա: